ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հունվարի 2016 թվականի N 4-Ա

ՖՈՒՏԲՈԼԻ ԽԱՂԱԴԱՇՏ ԿԱՌՈՒՅԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ԱՌԱՆՁՆԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ կետով, հաշվի առնելով քաղաքապետի առաջարկությունը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից Սևան քաղաքում արհեստական խոտածածկույթով ֆուտբոլի խաղադաշտի կառուցելու նախաձեռնությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և համայնքային սեփականություն հանդիսացող, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 31 հասցեում գտնվող զբոսայգու սպասարկման համար նախատեսված 18.54հա հողատարածքից առանձնացնել 1.5հա հողատարածք / հյուսիս-արևմտյան հատված /՝ կառուցելու արհեստական խոտածածկով ֆուտբոլի խաղադաշտ՝ ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի լիարժեք գործունեության համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ 13

դեմ 0

ծեռնապահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ



ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվարի 2016 թվականի N 5-Ա

ԲԱՆԿԱՅԻՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՅԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետով, հիմք ընդունելով Սևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ԳԷՖ-ի միջև 01.12.2015թ. ստորագրված Մտադրությունների մասին Հուշագիրը, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել Հուշագրով ամրագրված, ինչպես նաև կողմերի միջև հավանության արժանացած Լուսավորության համակարգերի էսերգաարդյունավետության բարձրացման նպատակային ֆոնդի ստեղծման և դրա կառավարման հայեցակարգի կիրառումը ապահովելու նպատակով բացել բանկային արտաբյուջետային հաշիվ:
2. Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝
✓ կազմակերպել բանկային արտաբյուջետային հաշվի բացման հետ կապված գործառույթները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ 13

դեմ 0

ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՄ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
12. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
13. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 փետրվարի 2016 թվականի N 6-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Համայնքի 2015թ. տարեկան բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 90.2%-ով, 562.4 մլն. դրամ ճշտված պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 507.1 մլն. դրամ, թերակատարումը կազմել է ընդհանուր 55.3 մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով՝ 9.0 մլն. դրամ, ֆոնդային բյուջեի մասով՝ 46.3 մլն. դրամ: Նախորդ՝ 2014թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 8.3%-ով, կամ ավել եկամուտները կազմել են 39.1 մլն. դրամ:

2015թ. տարեկան բյուջեի վարչական մասը կատարվել 98.2 %-ով / պլան՝ 500.4 մլն. դրամ, փաստացի՝ 491.5 մլն. դրամ /: 2014թ. համեմատությամբ բյուջեի վարչական մասում ավել եկամուտները կազմել են 34.0 մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2014թ. համեմատությամբ ավելացել են 7.4 %: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 92.5 %-ով / պլան՝ 120.0 մլն. դրամ, փաստացի՝ 111.0 մլն. դրամ /: Նախորդ՝ 2014թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները թերակատարվել են 3.7 %-ով, կամ սեփական եկամուտների հավաքագրումը պակասել է 4.3 մլն. դրամի չափով:

Վարչական բյուջեի եկամտատեսակների գծով նախորդ տարվա համեմատությամբ գերակատարվել են փոխադրամիջոցների գույքահարկը / 4.4% /, շենք-շինությունների գույքահարկը՝ / 19.0 % /, հողի հարկը՝ / 9.3 % /, այս երեք եկամտատեսակների գերակատարումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել են 5.8 մլն. դրամի չափով:

2015թ. ընթացքում սեփական եկամուտները, բացառությամբ ոչ հարկային եկամուտների, թերակատարվել են բոլոր եկամտատեսակների գծով, ընդհանուր առմամբ 9.0 մլն. դրամի չափով: Թերակատարումների հիմնական պատճառը ազգաբնակչության և իրավաբանական անձանց վճարումների մակարդակի նվազումն է, որոնք և օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ ունեն:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել է 25.2%-ով / ճշտված պլան՝ 62.0 մլն. դրամ, փաստացի՝ 15.6 մլն. դրամ /: Նախորդ՝ 2014թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի փաստացի եկամուտները ավելացել են 5.2 մլն. դրամով կամ 49.3%-ով:

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Եկամուտների կատարման մակարդակից ելնելով՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2015թ. տարեկան բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 88.7%-ով: 562.6 մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 499.2 մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 63.4 / 11.3% / մլն. դրամ:

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 97.7%-ով (պլան՝ 501.5 մլն. դրամ, փաստացի ծախս՝ 490.2 մլն. դրամ), թերակատարումը կազմել է 11.3 մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 44.8%-ը կամ 219.4 մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 112.4 մլն. դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները (22.9%), սանիտարական մաքրման և փողոցային լուսավորության ծախսերը կազմել են 73.0 մլն. դրամ կամ վարչական մասի 14.9 % -ը: Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2015թ. տարեկան բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով. կրթության ծախսերը՝ 99.5% , մշակույթի ծախսերը՝ 99.7%:

2014թ. տարեկան համեմատությամբ 2015թ. վարչական բյուջեի ծախսերը ավել են կատարվել 33.3 մլն. դրամ կամ 7.3 %-ի չափով:

2015թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել է 57.5%-ով / պլան՝ 136.5 մլն. դրամ, փաստացի ծախս՝ 78.5 մլն. դրամ /, նախորդ 2014թ. համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով պակաս ծախսերը կազմել են 2.5 մլն. դրամի չափով, կամ նախորդ տարվա համեմատությամբ ֆոնդային բյուջեի ծախսերը պակասել են 3.1 % -ով: Ֆոնդային բյուջեի ծախսերի կատարումը 78.9 մլն. դրամի չափով ապահովվել է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 69.6 մլն. դրամի չափով ֆոնդային բյուջե հատկացման հաշվին, կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 88.7%-ը ապահովվել է ոչ կապիտալ ընթացիկ եկամուտների հաշվին:

Համայնքի 2015թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 66.0 մլն. դրամի չափով ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար: 1.3 մլն. դրամի չափով կատարվել է փողոցային լուսավորության ցանցի կառուցման ծախսերի պարտքի մարում, 3.4 մլն. դրամի չափով ընդհանուր բնույթի ծախսեր:

Իրականացվել է շուրջ 143.0 մլն. դրամի ասֆալտապատման աշխատանքներ, հիմնանորոգվել է մարզադպրոցի տանիքը և հատակը 7.0 մլն. դրամ:

ՊԱՐՏՔԵՐ

2015թ. հունվարի 1-ի դրությամբ պարտքերը կազմել են 97.2 մլն. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2015թ. ընթացքում մարվել է 58.2 մլն. դրամ պարտք, այդ թվում՝ 32.6 մլն. դրամի չափով փողոցային հիմնանորոգման, 18.0 մլն դրամի չափով՝ ՀՈԱԿ-ների աշխատավարձի պարտք, 1.3մլն. դրամ փողոցային լուսավորության կառուցման, 6.3մլն. դրամ այլ պարտքեր:

2015թ. ընթացքում կուտակվել է 136.4 մլն. դրամ նոր պարտք, այդ թվում՝

- 133.1 մլն. դրամ փողոցների փոսային հիմնանորոգում,
- 3.3 մլն. դրամ նախագծային ծախսեր,

2015թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի պարտքերը կազմում են 175.4 մլն. դրամ, որը վերաբերում է համայնքի ֆոնդային մասին :

Համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար գույքահարկի տարեկան պլանը նախատեսված է եղել 23900.0 հազ. դրամ:

Հավաքագրումն կազմել է 20353.5 հազ դրամ / 85.2% /: Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկի հավաքագրումը, ըստ պլանային թվի, եղել է 9.6մլն. դրամ: 2015թ-ին հավաքագրվել է 7.4հազ. դրամ / 77.3% /, փոխադրամիջոցների գծով գույքահարկի վճարումը կատարվել է 95.5 %-ով. պլանային 47.5մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 45.4 հազ. դրամ:

Առևտրի և սպասարկման գծով տեղական տուրքերի՝ պլանավորված 9000.0հազ. դրամի դիմաց կատարողականը կազմում է 5511.4 հազ. դրամ:

Համայնքի բյուջեի եկամուտների, ծախսերի կատարման, ինչպես նաև պարտքերի առաջացման, մարման վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվությունը բերված է համապատասխանաբար թիվ 1, 2, 3 հավելվածներում:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ, 69-րդ հոդվածի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2,3 կետերի պահանջները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել համայնքի 2015թ. բյուջեի կատարման մասին հաշվետվությունը / թիվ 1, 2, 3 հավելվածները կցվում են /:

Կողմ 10

դեմ 0

ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
7. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
8. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ



ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Համայնքի 2015թ. տարեկան բյուջեի եկամուտների կատարման և համեմատական վերլուծության ցուցանիշները

	Եկամուտների անվանումը	2015թ. տարեկան			2014թ. տարեկան			2015թ տարեկան համեմատական 2014թ. 1-ին տարեկան նկատմամբ	
		պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	փաստացի	%
1	Գույքահարկ համայնքի տարածքում գտնվող շենք-շինությունների համար	23900.0	20353.5	85.2	24500.0	17099.7	69.8	+3253.8	19.0
2	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	47500.0	45384.0	95.5	41500.0	43449.0	104.7	+1935.0	4.4
3	Հողի հարկ վարչ. տարածքում գտնվող հողերի համար	9600.0	7420.4	77.3	9500.0	6786.3	71.4	+634.1	9.3
4	Տուրքեր, ընդամենը ա/թ	15000.0	8426.6	56.2	15000.0	13207.3	88.1	-4780.7	36.2
5	Տեղական տուրքեր	9000.0	5511.4	61.2	9000.0	7250.0	80.6	-1738.6	23.9
6	Ընդամենը ոչ հարկային եկամուտներ ա/թ	24001.2	29457.0	122.7	32603.5	34809.4	106.8	-5352.4	15.4
7	Ընդամենը սեփական եկամուտներ	120001.2	111041.5	92.5	123103.5	115351.7	93.7	-4310.2	3.7
8	Այլ եկամուտ / ԲՎԱԳ /	5534.9	5534.9	100.0	4358.6	4358.6	100.0	+1176.3	27.0
9	Պաշտոնական տրանսֆերտներ	374910.3	374910.3	100.0	337815.1	337815.0	100.0	+37095.3	11.0
10	ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	500446.4	491486.7	98.2	465277.2	457525.3	98.3	+33961.4	7.4
11	ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	62000.0	15610.7	25.2	98646.1	10452.1	10.6	+5158.6	49.3
12	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	562446.4	507097.4	90.2	563923.3	467977.4	83.0	+39120.0	8.3

Համայնքի 2015թ. տարեկան բյուջեի ծախսերի կատարման և համեմատական վերլուծության ցուցանիշները

ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	2015թ. տարեկան			2014թ. տարեկան			2015թ տարեկան համեմատականը 2014թ. տարեկան նկատմամբ	
	ճշտված պլան	փաստացի ծախս	%	ճշտված պլան	փաստացի ծախս	%	փաստացի h. դ. / +,- /	%
ԸՆԴՀԱՆՈՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	116368.6	112393.1	96.6	96509.0	94456.3	97.9	+17936.8	18.9
Շրջակա միջավայրի պաշտպանություն	73389.0	72953.0	99.4	78860.0	76772.5	97.3	-3819.5	4.9
Հանգիստ և սնակույթ	35160.0	35054.2	99.7	38400.0	35900.1	93.5	-845.9	2.3
Կրթություն (ՀՈԱԿ)	185233.0	184343.4	99.5	168860.0	167826.0	99.4	+16517.4	9.8
Սոցիալական պաշտպանություն	15943.0	15910.5	99.8	12000.0	11976.0	99.8	+3934.5	32.8
Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	75361.0	69560.0	92.3	71039.8	69977.4	98.5	-417.4	0.6
ՎՄՂՎԱՆ ԲՅՈՒՋԵ ՆՐՔ Վ/Բ պահուստային ֆոնդից հատկացում \$/Բ	501454.6	490214.2	97.7	465668.8	456908.3	98.1	+33305.9	7.3
	74500.0	69560.0	93.4	71039.8	69977.4	98.5	-417.4	0.6
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ԸՆԴԱՄԵՆԸ	136509.2	78500.0	57.5	170092.0	81009.5	47.6	-2509.5	3.1
Ընդ. Բնույթի հանր. Ծառայություններ	5543.2	3393.2	61.2	11230.0	5073.6	45.2	-1680.4	33.1
Ծանապարհային տնտեսություն	114493.0	65987.7	57.6	131418.0	58489.2	44.5	+7498.5	12.8
Անձրևաջր. Ցանցի դիտ. Հիմն				2545.0	1900.8	74.7		
Փողոց. Լուսավոր. Ցանցի կառ.	1257.0	1257.0	100.0	12919.0	10906.0	84.4	-9649.0	88.5
Բնակ. Տնտես.				3980.0	2265.3	56.9		
Մարզադպրոցի տանիքի հիմնանորոգում	7000.0	6996.8	100.0					
Թիվ 2 Զարթոնք մ/մ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման համայնքային ներդրում	7350.0							
Խաղահրապարակ	866.0	865.3	99.9					
Քաղաքային զբոսայգի				8000.0	2374.6	29.7		
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍ	562602.8	499154.2	88.7	564721.0	467940.5	82.8	+31213.7	6.7

1. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ

	Պարտքերի տեսակները	պարտքերը 01.01.15թ. դրությամբ	Մարվել են 2015թ. ընթացքում	Առաջացել է նոր պարտք 2015թ. ընթացքում	մյն. դրամ Պարտքերի մնացորդը 01.01. 2016թ. դրությամբ
Ա	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐ				
	ԸՆԴԱՄԵՆԸ, որից	97.2	58.2	136.4	175.4
1	Քաղաքապետարան	79.2	40.2	136.4	175.4
2	Կրթական մշակութային կազմակերպություններ	18.0	18.0		

2. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1	Աշխատավարձ				
2	Սոց. հատկացումներ				
3	Ստոր մանկապարտեզների սնունդ				
4	ՀՈԱԿ-ների գծով պարտքեր	18.0	18.0		
4	Վերելակների և ջեռուցման զծ. պարտքեր				
5	Տնտես. և տրանսպորտային ծախսեր				
6	Փողոցների փոսային նորոգման ծախսեր	68.3	32.6	133.1	168.8
7	Լուսավորության ցանցի կառուցում	1.3	1.3	-	-
8	Այլ ծախսեր	2.5	2.5	-	-
9	Նախագծային տեխ. հսկ. զծ. պարտքեր	7.1	3.8	3.3	6.6
	ԸՆԴԱՄԵՆԸ	97.2	58.2	136.4	175.4

3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՄ ՊԱՐՏՔԵՐ

1	ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏՔԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ	-	-	-
---	-----------------------------	---	---	---



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 փետրվարի 2016 թվականի N 7-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
/ ԶԵԿ. ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54-րդ,
«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Համայնքի 2016թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսեր / բաժին 01, խումբ 1, դաս 1/, այդ թվում՝
 - 1.1 հոդված 4232, ավելացնել 300.0 հազ. դրամ, հաստատել 888.0 հազ. դրամ.
 - 1.2 հոդված 4264 տրանսպորտային նյութեր պակասեցնել 300.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 4700.0 հազ. դրամ.
2. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ / բաժին 01, խումբ 6, դաս 1, հոդված 5111 /, որից՝ հուշախաչքարի ձեռքբերում, ավելացնել 980.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 980.0 հազ. դրամ.
3. «Թիվ 2 «Զարթոնք» մ/մ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման համայնքային ներդրում /բաժին 9, խումբ 1, դաս 1, հոդված 5113/, պակասեցնել 980.0 հազ. դրամ, հաստատել տարեկան 16220.0 հազ. դրամ:

Կողմ 10

դեմ 0

ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
7. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
8. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ



ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 փետրվարի 2016 թվականի N 8-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2015թ. տարեկան արդյունքներով իրականացվել է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրում: Գույքագրումը կատարվել է ըստ առանձին հիմնարկությունների և քաղաքապետարանի: Արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվել են քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժին:

Համայնքի մսուր-մանկապարտեզների, արտադարձական հիմնարկների, «Գրադարանների կենտրոնացված համակարգ», «Համայնքային մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ների գույքագրման ընդհանրացված ամփոփագիրը ներկայացված է հետևյալ ցուցանիշներով: 01.01.15թ. դրությամբ գույքի արժեքը կազմել է ընդամենը. այդ թվում՝

❖ հիմնական միջոցներ՝	118772.1	հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	8766.9	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	127539.0	հ. դրամ

Տարվա ընթացքում դուրս է գրվել

❖ հիմնական միջոցներ՝	153.8	հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	1115.0	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	1268.8	հ. դրամ

Համայնքի բյուջեի միջոցներով և մի շարք ծրագրերի իրականացմամբ ստացվել է

❖ հիմնական միջոցներ՝	6749.9	հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	1511.0	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	8260.9	հ. դրամ

Տարեվերջին՝ առ 01.01.2016թ. դրությամբ, ՀՈԱԿ-ների գույքի ձեռքբերման արժեքը կազմել է

❖ հիմնական միջոցներ՝	125368.2	հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	9162.9	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՀՈԱԿ-ներ	134531.1	հ. դրամ

«Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի գույքը 01.01.2015թ. կազմել է

❖ հիմնական միջոցներ՝	12434.4	հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	468.0	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	12902.4	հ. դրամ

«Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ից գույքի դուրսգրում չի կատարվել:

Տարվա ընթացքում քաղաքապետարանի հաշվեկշռից «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի հաշվեկշիռ անհատույց օգտագործման իրավունքով տեղափոխվել են 65012.9 հազ. դրամի հիմնական միջոցներ, և 01.01.2016թ. դրությամբ ՀՈԱԿ-ի հաշվեկշռում գույքի ձեռքբերման արժեքը կազմում է

❖ հիմնական միջոցներ՝	77447.3	հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	468.0	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	77915.3	հ. դրամ

«Սևանի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ գույքի ձեռքբերման արժեքը 01.01.2015թ. դրությամբ կազմել է

❖ հիմնական միջոցներ՝	9114.6	հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	25.9	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	9140.5	հ. դրամ

Տարվա ընթացքում օտարվել է «Կամազ» մակնիշի մեկ ավտոմեքենան լրիվ ամորտիզացման, ոչ պիտանի լինելու պատճառով, դուրս է գրվել 6 աղբաթափ տրանսպորտային միջոց՝ ընդհանուր 1366.0 հազար դրամ արժողությամբ, և 01.01.2016թ. դրությամբ «Սևանի կոմունալ տնտեսություն» ԲԲԸ-ի գույքի ձեռքբերման արժեքը կազմել է

❖ հիմնական միջոցներ՝	7748.6	հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	25.9	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	7774.5	հ. դրամ

Քաղաքապետարանի հաշվապահական հաշվեկշռում հիմնական միջոցների արժեքը 01.01.2015թ. դրությամբ, ըստ գույքագրման արդյունքների, կազմել է

❖ հիմնական միջոցներ՝	498631.4	հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	3656.1	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝ քաղաքապետարան՝	502287.5	հ. դրամ

Քաղաքապետարանի հաշվեկշռից դուրսգրումները, օտարումները, ՀՈԱԿ-ների հաշվեկշիռներին տեղափոխումները կազմել են 47950.2 հազ. դրամ, այդ թվում՝

❖ Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի տարածքի օտարում /ձեռքբերման արժեքով՝	8600.0	հ. դրամ
❖ Աղբամուղի հարթակի հանձնում համատիրությանը՝	400.0	հ. դրամ
❖ Ոչ պիտանի, լրիվ ամորտիզացված հիմնական միջոցների դուրսգրում, խոտանում՝	9430.5	հ. դրամ
❖ Անհատույց հանձնում «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ հաշվեկշիռ՝	29219.7	հ. դրամ:

2015թ. տարվա ընթացքում քաղաքապետարանի հաշվեկշիռ մուտքագրվել են 917.0 հ. դրամ հիմնական / համակարգչային տեխնիկա/ և 253.0 հ. դ. արագամաշ առարկաներ:

01.01.2016թ. դրությամբ քաղաքապետարանի հաշվեկշռում գույքի ձեռքբերման արժեքը կազմել է

❖ հիմնական միջոցներ՝	451598.2	հ. դրամ.
❖ արագամաշ առարկաներ՝	3909.1	հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	455507.3	հ. դրամ

Համայնքի գույքի ընդհանուր / ձեռքբերման գներով / արժեքը	01.01.2015թ.
դրությամբ կազմել է	
❖ հիմնական միջոցներ՝	638952.5 հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	12916.9 հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	651869.4 հ.դրամ

Հիմնական միջոցների դուրսգրումները, օտարումներ կազմել են ընդհանուր 49470.0 հազ. դրամ, արագամաշ առարկաներինը՝ 1115.0 հազ. դրամ.

❖ Հիմնական միջոցների ձեռքբերումները և անհատույց հանձնումները կազմել են ընդհանուր 72679.8 հազ. դրամ, արագամաշ առարկաներինը՝ 1764.0 հազ. դրամ: 01.01.2016թ. դրությամբ համայնքի գույքի /ձեռքբերման արժեքով/ արժեքը կազմել է	
❖ հիմնական միջոցներ՝	662162.3 հ. դրամ
❖ արագամաշ առարկաներ՝	13565.9 հ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	675728.2 հ.դրամ

Համայնքի ավագանու՝ 09.08.2013թ. N 29-Ա որոշման համաձայն՝ համայնքի սեփականությանն է անցել «Սևանի կոմունալ տնտեսություն» ԲԲ ընկերության բաժնետոմսերի 80.8 %-ը, որը գնվել է ընկերությունից 40.0 մլն. դրամ տարաժամկետ վճարման պայմանով: Վճարումը 01.01.2016թ. դրությամբ ավարտվել է, և համայնքի բաժնետնասը ընկերությունում կազմում է 99.2 %:

Կցվում է տարեկան գույքագրման արդյունքների ամփոփագիրը / հավելված թիվ 1 /:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել համայնքի սեփականություն համարվող գույքի 2015թ. տարեկան գույքագրման արդյունքները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ 10

դեմ 0

ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
7. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
8. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա Մ Փ Ո Փ

Սևան համայնքի 2015թ. գույքի գույքագրման արդյունքների

N	Անվանում	Մնացորդը առ 01.01.2015թ. դրությամբ	Դուրս է գրվել հիմն. միջոցներ և փոքրարժեք գույք 2015թ-ի ընթացքում		Ստացվել է հիմն. միջոցներ և փոքրարժեք գույք 2015թ-ի ընթացքում		Մնացորդը առ 01.01.2016թ. դրությամբ
			անվանումն երի քանակը	գումար	անվանումն երի քանակը	գումար	
1	Թիվ 1 “Բողբոց” մ/մ						
	ա/ հիմնական միջոցներ	11968.6			12	648.8	12617.4
	բ/ արագամաշ առարկաններ	2023.2				637.2	2660.4
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Թիվ 1 “Բողբոց” մ/մ	13991.8				1286.0	15277.8
2	Թիվ 2 “Զարթոնք” մ/մ						
	ա/ հիմնական միջոցներ	9947.4				30.0	9977.4
	բ/ արագամաշ առարկաններ	664.8				95.2	760.0
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ “Զարթոնք” մ/մ	10612.2				125.2	10737.4
3.	Թիվ 3 “ Հեքիաթ” մ/մ						
	ա/ հիմնական միջոցներ	18692.1			6	590.0	19282.1
	բ/ արագամաշ առարկաններ	2800.1	32	905.7			1894.4
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ “ Հեքիաթ” մ/մ	21492.2		905.7		590.0	21176.5
4.	Թիվ 4 “Գալիք” մ/մ						
	ա/ հիմնական միջոցներ	17052.0		97.8	82	568.0	17522.2
	բ/ արագամաշ առարկաններ	701.1		65.8		70.7	706.0
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ “Գալիք” մ/մ	17753.1		163.6		638.7	18228.2
5.	Գազարին մ/մ						
	ա/ հիմնական միջոցներ	3294.9		49.5	7	237.6	3483.0
	բ/ արագամաշ առարկաններ	288.0				84.4	372.4
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Գազարին մ/մ	3582.9		49.5		322.0	3855.4
6	Մարգադպրոց						
	ա/ հիմնական միջոցներ	10965.0					10965.0
	բ/ արագամաշ առարկաններ	1842.2		143.5		275.0	1973.7
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարգադպրոց	12807.2		143.5		275.0	12938.7

7	Երաժշտական դպրոց						
	ա/ հիմնական միջոցներ	7458.5					7458.5
	բ/ արագամաշ առարկաներ	58.7				3.2	61.9
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երաժշտական դպրոց	7517.2				3.2	7520.4
8	Արվեստի դպրոց						
	ա/ հիմնական միջոցներ	1670.4				37.5	1707.9
	բ/ արագամաշ առարկաներ	149.1				78.5	227.6
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Արվեստի դպրոց	1819.5				116.0	1935.5
9	ԳԿՀ						
	ա/ հիմնական միջոցներ	7831.0		6.5		99.2	7923.7
	բ/ արագամաշ առարկաներ						
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԳԿՀ	7831.0		6.5			7923.7
11	Համայնքային մշակութային կենտրոն						
	ա/ հիմնական միջոցներ	29892.2					29892.2
	բ/բաղադրատարր նից՝ հիմնակ. միջոց.					4538.8	4538.8
	գ/ արագամաշ առարկաներ	239.7				266.8	506.5
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Համայնքային մշակութային կենտրոն	30131.9				4805.6	34937.5
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Համայնքի ՀՈԱԿ-ում, որից						
	ա/ հիմնական միջոցներ	118772.1	32	153.8	107	6749.9	125368.2
	բ/ արագամաշ առարկաներ	8766.9		1115.0		1511.0	9162.9
	Ընդամենը համայնքի մուր-մանկապարտեզներում և դպրոցներում	127539.0	32	1268.8	107	8260.9	134531.1
12	“ՄՀԿՄ և Բարեկարգում” ՀՈԱԿ						
	ա/ հիմնական միջոցներ	12434.4					12434.4
	բ/ արագամաշ առարկաներ	468.0					468.0
	գ/բաղադրատարր նից անհատույց հանձնված					65012.9	65012.9

	ԸՆԴԱՄԵՆԸ՝ “ՍՀԿՍ և Բարեկարգում” ՀՈԱԿ	12902.4				65012.9	77915.3
13	“Սևանի կոմունալ տնտեսություն” ԲԲԸ						
	ա/ հիմնական միջոցներ և գրասենյակային գույք	9114.6	7	1366.0			7748.6
	բ/ արագամաշ առարկաներ	25.9					25.9
	գ/ տեղափոխված է “ՍՀԿՍ և Բարեկարգում” ՀՈԱԿ	20044.4		20044.4			
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ «Սև. Կոմ. տնտես.» ԲԲԸ	29184.9		21410.4			7774.5
14	ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ						
	ա/ հիմնական միջոցներ	498631.4	76	9730.5	5	917.0	451598.2
	բ/ օտարում			8600.0			
	գ/ «ՍՀԿՍ և Բ» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով հանձնում			29219.7			
	դ/ համատ. անհ. օգտ. իրավ. հանձնում			400.0			
	ե/ արագամաշ առարկաներ	3656.1			8	253.0	3909.1
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ քաղաքապետարան	502287.5		47950.2		1170.0	455507.3
	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ. ն/թ	651869.4		50585.0		74443.8	675728.2
	ա/ հիմնական միջոցներ	638952.5		48470.0		72679.8	662162.3
	բ/ արագամաշ առարկաներ	12916.9		1115.0		1764.0	13565.9



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 փետրվարի 2016 թվականի N 9-Ն

**ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ՈՒ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ, ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ
ԵՎ ԱՅԼ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48¹, 66 և 67 հոդվածների և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Թույլատրել վարձակալության հանձնելու
 - ✓ համայնքային սեփականության բնակելի տարածքները՝
տարեկան վարձավճար սահմանելով 1քմ - **200 դրամ.**
 - ✓ համայնքային սեփականության ոչ բնակելի տարածքները՝
տարեկան վարձավճար սահմանելով 1քմ - **1000 դրամ.**
Գազարինում սահմանել տարեկան վարձավճար 1քմ - **200 դրամ:**
 - ✓ համայնքային սեփականություն հանդիսացող արտադրական և նկուղային տարածքները՝
տարեկան վարձավճար սահմանելով 1քմ - **200 դրամ:**
2. Համայնքի վարչական տարածքում սահմանել հողօգտագործման և կառուցապատման վճարների հետևյալ դրույքաչափերը՝
 - Աբովյան փողոցից մինչև Շինարարների փողոց՝ Նաիրյան փողոցի վրա տեղադրվող օբյեկտների 1 քմ հողօգտագործման համար՝ կառուցապատման վճար տարեկան - **400 դրամ.**
 - քաղաքի մյուս տարածքներում տեղադրվող օբյեկտների համար 1քմ տարեկան վճար - **300 դրամ.**
 - Ցամաքաբերդ և Գոմաձոր թաղամասերի, Գազարին գյուղի օբյեկտների համար՝ 1քմ տարեկան վճար - **150 դրամ.**
 - ավտոլցակայանների համար՝ յուրաքանչյուր 1քմ հողատարածքի համար տարեկան վճար - **150 դրամ.**
 - ավտոտնակների համար յուրաքանչյուր 1 քմ համար տարեկան վճար - **150 դրամ.**
 - բացօթյա սրճարաններ կազմակերպելու համար 1քմ հողօգտագործման, կառուցապատման տարեկան վճար - **150 դրամ.**
 - գոյություն ունեցող հասարակական և արտադրական շինությունների սպասարկման համար տրամադրվող հողերի կառուցապատման վճար 1 քմ համար տարեկան - **30 դրամ.**
 - ավտոկայանատեղերի համար յուրաքանչյուր 1 քմ համար հողօգտագործման վճար սահմանել տարեկան - **130 դրամ.**
 - գյուղատնտեսական շուկաներ կազմակերպելու համար հողօգտագործման 1 քմ

- տարեկան վարձավճար - **120 դրամ**.
- բացօթյա տոնավաճառներ կազմակերպելու համար հողօգտագործման վարձավճար 1 քմ համար տարեկան - **100 դրամ**.
 - առափնյա հանգստի գոտիներ կազմակերպելու համար տրամադրվող հողերի կառուցապատման վճար սահմանել **1 քմ՝ 12.5 - 90 դրամ՝** ըստ հողերի գոտիականության սխեմաների.
 - գյուղատնտեսական հողերի օգտագործման վճար 1քմ հողի հարկի դրույքաչափին հավասարեցված վարձավճար՝ **1քմ-1.88 դրամ :**
 - արտադրական օբյեկտների կառուցման համար տրամադրվող 1քմ հողերի վճար - **30 դրամ**
 - կանաչապատման, բարեկարգման նպատակով տրամադրված 1քմ հողի վարձավճար տարեկան - **30 դրամ**
 - ք.Սևան, Նաիրյան 164 հասցեում (քաղաքապետարանի վարչական շենքում) 1քմ ոչ բնակելի տարածքների վարձակալության տարեկան վարձավճար - **5 000 դրամ:**
 - 3. Համայնքային սեփականություն հանդիսացող արտադրական և նկուղային տարածքների 1քմ ընթացիկ տարվա համար - **200 դրամ**.
 - 4. Սահմանել՝ համայնքի ավագանու կողմից սույն որոշմամբ հաստատված հողօգտագործման վճարները համարվում են մրցութի մեկնարկային գներ, ինչպես նաև առանց մրցութի տրամադրման դեպքում՝ ուղղակի վարձակալության և կառուցապատման վճարներ :
 - 5. Համայնքի տարածքում անշարժ գույքի հասցեավորման աշխատանքների ծառայության վճար - **1000 դրամ:**
 - 6. Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 50 տոկոսի չափով՝ **1քմ - 621 դրամ,**
 - ուղղակի վաճառքի գին սահմանել հողի կադաստրային արժեքը **1քմ - 1242 դրամ,**
 - ՀՀ Հողային օրենսգրքի 60 հոդվածին չհամապատասխանող վարձակալության իրավունքով պատկանող հողամասերի ուղղակի վաճառքի գին սահմանել **1քմ - 1242 դրամ:**

Կողմ 10

դեմ 0

ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
7. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
8. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՍԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 փետրվարի 2016 թվականի N 10-Ն

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 12.05.2014ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 17-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սևան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգի 13-րդ կետում ամրագրված պարտադիր բարեկարգման պահանջները, հաշվի առնելով, որ այդ պահանջները չեն կատարվում պատշաճ ձևով և ժամանակին, մասնավորապես՝ մայթերի բարեկարգում, ձյան ամենօրյա մաքրում, ձյան կույտերի տեղափոխում, որոնք էլ խոչընդոտում են մարդկանց երթևեկին և անվտանգությանը, համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 156-րդ հոդվածի՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սևան համայնքի ավագանու՝ 12.05.2014թվականի թիվ 17-Ն որոշմամբ հաստատված Սևան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգում կատարել լրացում՝ 13-րդ՝ պարտադիր բարեկարգման պահանջներում ավելացնել 3-րդ ենթակետ հետևյալ շարադրմամբ՝
✓ պարտադիր բարեկարգման պահանջները չկատարելու դեպքում սահմանվում է տուգանք նվազագույն աշխատավարձի 20-ապատիկի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Կողմ 10

դեմ 0

ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
7. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
8. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ՈՒՒԴԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Սևան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և (կամ) տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Սևանի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Սևան համայնքի վարչական տարածքում տեղակայված (գտնվող)՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի և տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի և տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների կանաչապատում.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Սևանի քաղաքապետի կողմից համաձայնեցված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան: Կատարվող աշխատանքների սխեման անվճար տրվում է Սևանի քաղաքապետարանի ճարտարապետա-շինարարական բաժնի կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Սևանի քաղաքապետարանի կողմից տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Սևանի քաղաքապետարանի ճարտարապետա-շինարարական բաժնի կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ

շենքի ճակատների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

3) պարտադիր բարեկարգման պահանջները չկատարելու դեպքում սահմանվում է տուգանք նվազագույն աշխատավարձի 20-ապատիկի չափով:

(փոփոխությունը՝ համայնքի ավագանու՝ 25.02.2016թ. N10-Ն որոշում)

14. Սևանի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Սևանի քաղաքապետարան ներկայացված ֆիտոնախագծի հաստատումից հետո:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն համաձայնեցնում է Սևանի քաղաքապետարանի հետ:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա

պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 փետրվարի 2016 թվականի N 11-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ / ՆՎԻԵԼՈՒ / ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Ադիբեկ Նորիկի Բաղեյանի դիմումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Ք. Սևան, Նաիրյան 1-ին նրբանցք 8 շենք 27 ա հասցեում գտնվող 1-սենյականոց բնակարանի վարձակալ Ադիբեկ Նորիկի Բաղեյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրել / նվիրել / Սևան համայնքի սեփականություն հանդիսացող, ք. Սևան, Նաիրյան 1-ին նրբանցք 8 շենք 27 ա հասցեում գտնվող գտնվող / վկայական՝ 2384729, տրված՝ 22.03.2010թ. / 20.04քմ մակերեսով բնակարանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ 10

դեմ 0

ծեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
7. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
8. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 2-02-20, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 փետրվարի 2016 թվականի N 12-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ԳԾՈՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ
ԵՎ ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սևան համայնքի ներքոհիշյալ անձանց գծով սահմանել հետևյալ արտոնությունները՝

ա) Շինությունների գույքահարկ

Հ/Հ	Հարկատուի անվանումը	Շինության հասցեն	Պարտքի զիջում / դրամ /	Տույժի զիջում / դրամ /
1	Կարեն Օսպիյան	Սևան քաղաքից հարավ Բ4, Բ1	-	16584
2	Գևորգ Բարսեղյան	Ելենովկա 10 / 1ա	-	14334

բ) Փոխադրամիջոցների գույքահարկ

Հ/Հ	Սեփականատիրոջ անուն, ազգանուն	Փոխադրամիջոցի մակնիշը և պետ համարանիշը	Ապառքը	Տույժ
1	Վահե Մովսիսյան	Նիսան 60 VM 100	-	7919
2	Ռուդիկ Ղարիբյան	ՌԻԱՐ 34 SS 623	9253 /2012- 2013թթ./	12179
3	Միրզա Հակոբյան	ՎԱՐ 2101 34LS 127	25527	11251
4	Գոռ Սիմոնյան	Տոյոտա 88 VV 100	-	46177
5	Արամ Նիկողոսյան	Տոյոտա 30 OS 330	-	8803
6	Ժորա Առաքելյան	ԿԻԱ 34 FA 398	-	3730
7	Վան Թադևոսյան	ՄԲՑ 34 CU 779	2958	6200
8	Համլետ Գրիգորյան	ԳԱՐ 3110 07 SO 455	-	12237
9	Սեդա Անդրեասյան	ՕՊԵԼ 34 VU 917	-	7752
10	Սամվել Մխիթարյան	Միցուրիշի 34 NF 218	-	4263
11	Սամվել Սարգսյան	ՎԱՐ 2106 2800591	-	4679

գ) Հողի հարկ

Հ/Հ	Հարկատուի անվանումը	Հասցեն	Պարտքի գիշում / դրամ /	Տույժի գիշում / դրամ /
1	Հերբերտ Կարապետյան	Ազատության 1	-	12336
2	Արտակ Ղազարյան	5-րդ մ/թ 16 / 5	-	2185

դ) վառելիքաքսայուղերի տեղական տուրք

1. Դավիթ Գնդոյան - տարեկան գումարի 50%-ի չափով՝ 37500 դրամ / պայմանավորված Շինարարների փողոցի ասֆալտապատման աշխատանքների գծով 2015թ. կատարած շուրջ 200.0 հազ. դրամ ներդրմամբ / :

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ 10

դեմ 0

ծեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
6. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԵՐԳԵՅ
7. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
8. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝



ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ